ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2023թ. **N_____Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 163 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետը և 13-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևանի հ.163 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել ականավոր գիտնական, ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի անվամբ՝ «Երևանի Գրիգոր Գուրզադյանի անվան հ.163 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ԵՐԵՎԱՆԻ Հ. 163 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրիգոր Արամի Գուրզադյանը ծնվել է 1922 թվականի հոկտեմբերի 15-ին Իրաքի մայրաքաղաք Բաղդադում: Ծնողները 1915 թվականին մազապուրծ են եղել Մեծ եղեռնից:

1944 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոտեխնիկական և շինարարական ֆակուլտետները: Նույն տարի ընդունվել է ասպիրանտուրա:

1948 թվականին Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ, 26 տարեկան հասակում, Մոսկվայի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական թեզը «Միջաստղային գազային նյութի ճառագայթային հավասարակշռությունը» թեմայով: Վ. Համբարձումյանի հետ երկար տարիներ աշխատել է Բյուրականի աստղադիտարանում՝ հիմնադրումից ի վեր և ըստ էության (ԲԱ) հիմնադիր կազմում գլխավոր անձանցից մեկն էր:

1955 թվականին Լենինգրադի պետական համալսարանում պաշտպանել է դոկտորական թեզը:

1950-1966 թվականներին ղեկավարել է ԲԱ աստղերի և միգամածությունների ֆիզիկայի բաժինը:

1967-1973 թվականներին՝ տիեզերական հետազոտությունների մասնաճյուղը:

1973-1978 թվականներին ղեկավարել է Գառնիի աստղագիտության լաբորատորիան:

1978-1992 թվականներին եղել է ԲԱ արտամթնոլորտային աստղագիտության լաբորատորիայի վարիչ,

1979 թվականից ԵրՊԻ տիեզերական սարքաշինության ամբիոնի վարիչ:

1992-2004 թվականներին՝ Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտի տնօրեն:

1962 թվականին արժանացել է պրոֆեսորի կոչման:

1965 թվականին ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ:

1986 թվականին՝ ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ:

Հրատարակել է ավելի քան 200 գիտական հոդված և մեկ տասնյակ ստվարածավալ մենագրություններ նվիրված աստղաֆիզիկայի հիմնախնդիրներին: Հրատարակված աշխարհի խոշոր հրատարակիչների կողմից, նրա գրքերով կրթվել են մասնագետների սերունդներ: Ուսումնասիրել է մոլորակաձև միգամածությունների ֆիզիկան և դինամիկան՝ դեռևս 1960-ականներին կանխատեսել է մագնիսական դաշտի դերը միգամածություններում, ստեղծել աստղերի բռնկման տեսություն՝ հիմնված նրանցում ընթացող ոչ ջերմային երևույթների վրա: 1990-ականներին նա մշակեց սեղմ կրկնակի աստղերի ընդհանուր գունոլորտներ (շուրջքրոմների) և կրկնակի գնդաձև աստղակույտերի էվոլյուցիայի տեսությունները:

Գուրզադյանը տիեզերական աստղագիտության առաջնեկներից է: Նա ստեղծել է մի շարք գիտական սարքեր ու օպտիկական համակարգեր: Նրա անվան հետ է կապված «Օրիոն» տիեզերական աստղադիտարանի օպտիկական համակարգի աշխատանքի սկզբունքի, ավտոմատ կառավարման մեթոդիկայի ստեղծումը: Դեռ

1960-ականներին կիրառելով Ռ-5 բալիստիկ հրթիռներ, նա ղեկավարեց Արեգակի և աստղերի գերմանուշակագույն և ռենտգենյան դիտումները. առաջին թռիչքը կայացավ 1961 թ. փետրվարի 15-ին Կապուստին-Յար արձակման կայանից: 1969 թվականին նրա ղեկավարությամբ արձակվեցին "Պրոցիոն" տիեզերական աստղադիտակը Космос-309 ուղեծրային արբանյակի վրա, ապա "Ալտաիր" ռենտգենյան ուղեծրային աստղադիտակը «Метеор» արբանյակի վրա:

Այնուհետև Գուրզադյանն անցավ տիեզերական ուղեծրային աստղադիտարանների նախագծմանը, որոնցից ամենահայտնին են «Օրիոնները»: Դրանք գերազանցում էին ժամանակի աշխարհում իրականացվող տիեզերական նման գիտափորձերը և հանգեցրին կարևորագույն գիտական արդյունքների ստացմանը, տիեզերական սարքաշինական սկզբունքների մշակմանը: 1971 թվականի ապրիլին «Սալյուտ-1» առաջին տիեզերական կայանը ուղեծիր բարձրացրեց «Օրիոն-1»-ը, օբյեկտիվ պրիզմայով առաջին տիեզերական աստղադիտակը: Սակայն գագաթնակետն էր «Օրիոն-2»-ը, որը «Սոյուզ-13» տիեզերանավի վրա աշխատեց 1973 թվականի դեկտեմբերին: Առաջին անգամ ստացվեցին շատ թույլ՝ մինչև 13-րդ մեծության աստղերի բազմաթիվ կարճալիք սպեկտրագրեր, մոլորակաձև միգամածության առաջին կարճալիք սպեկտրագիրը՝ բացահայտելով նախկինում այդ միգամածություններում չդիտված ալյումինիումի և տիտանի սպեկտրալ գծեր, առաջին անգամ միգամածությունից գրանցվեց երկֆոտոն ճառագայթում, որ կանխատեսվել էր ֆիզիկոսների կողմից տասնամյակներ առաջ:

Նրա ղեկավարությամբ Գառնիի տիեզերական աստղագիտության լաբորատորիայում իրենց նախաթռիչքային պատրաստումն են անցել ավելի քան 40 խորհրդային տիեզերագնացներ: Նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում (1948-1978), Պոլիտեխնիկական ինստիտուտում հիմնադրել (1978) և ղեկավարել է ճշգրիտ սարքաշիության ամբիոնը:

Գուրզադյանի ստեղծագործական ժառանգությանն են պատկանում նաև բազմաթիվ կտավներ, փիլիսոփայական էսսեների գրքեր՝ նվիրված գիտությանը, արվեստին, ճարտարապետությանը:

2001 թվականին Գառնիում բացված, ապա 2015 թվականին Երևանում վերաբացված Տիեզերքի թանգարանում ներկայացված են տիեզերական հետազոտությունների վաղ շրջանի բացառիկ ցուցանմուշներ:

2019 թվականի մարտի 19-ին Երևանի պետական համալսարանի մուտքի ճեմասրահում հադիսավոր բացվել է Գուրզադյանի կիսանդրին: Կիսանդրին հեղինակել է քանդակագործ Տիգրան Մուրադյանը:

Գրիգոր Գուրզադյանը մահացել է 2014 թվականի փետրվարի 22-ին Երևանում:

«Երևանի հ.163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ականավոր հայ գիտնական, ֆիզիկոս աստղագետ, գրող էսսեիստ, գեղանկարիչ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի գրողների միության և Հայաստանի նկարիչների միության անդամ Գրիգոր Գուրզադյանի անվամբ անվանակոչելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, տիեզերական ծրագրերի առաջատար ճարտարագետներ Աշոտ Զախարյանի ու Ալեքսանդր Կաշինի կողմից, հարցը քննարկվել և հավանության է արժանացել դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետի և 13-րդ կետի դրույթներով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ Հ. 163 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևանի հ.163 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ Հ. 163 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևանի հ.163 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Քաղվածք

Երևանի հ. 163 հիմնական դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստից (23.02.2023թ. արձանագրություն N18):

Օրակարգ՝ «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անվանակոչության հարցը (զեկուցող՝ տնօրեն Ա. Դանիելյան):

Լսեցին՝ Երևանի հ. 163 հիմնական դպրոցը ականավոր գիտնական, ակադեմիկոս Գրիգոր Արամի Գուրզադյանի անվամբ անվանակոչելու մասին:

Դպրոցի տնօրեն Ա. Դանիելյանը ներկայացրեց ՀՀ պետական մրցանակների դափնեկիրներ, տիեզերական ծրագրերի առաջատար ճարտարագետներ Զախարյան Աշոտի և Կաշին Ալեքսանդրի հ. 163 հիմնական դպրոցը ակադեմիկոս Գ. Ա. Գուրզադյանի անվամբ անվանակոչելու առաջարկը և նրա մասին տեղեկագիրը:

Արտահայտվեցին՝ խորհրդի անդամներ Ս. Մալխասյանը, Գ. Մանուկյանը, Ա. Մկրտչյանը: Փաստեցին, որ մեծ պատիվ է հայտնի աստղագետի անվամբ դպրոցն անվանակոչելը:

Որոշեցին՝ Հավանություն տալ «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ականավոր աստղագետ, ակադեմիկոս Գրիգոր Արամի Գուրզադյանի անվամբ անվանակոչելու առաջարկին:

Կառավարման խորհրդի նախագահ / ՀԱ. Լալայան

Քարտուղար / Գ. Մանուկյան

Քաղվածք

Երևանի հ. 163 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի նիստից (17.02.2023թ. արձանագրություն N7):

Օրակարգ՝ «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անվանակոչության հարցը (զեկուցող՝ տնօրեն Ա. Դանիելյան):

Լսեցին՝ Երևանի հ. 163 հիմնական դպրոցը ականավոր գիտնական, ակադեմիկոս Գրիգոր Արամի Գուրզադյանի անվամբ անվանակոչելու մասին:

Դպրոցի տնօրեն Ա. Դանիելյանը ներկայացրեց ՀՀ պետական մրցանակների դափնեկիրներ, տիեզերական ծրագրերի առաջատար ճարտարագետներ Զախարյան Աշոտի և Կաշին Ալեքսանդրի հ. 163 հիմնական դպրոցը ակադեմիկոս Գ. Ա. Գուրզադյանի անվամբ անվանակոչելու առաջարկը և նրա մասին տեղեկագիրը:

Արտահայտվեցին՝ ուսուցիչներ Գ. Գյոզալյանը, Մ. Կարագուլյանը, Ա. Սահակյանը: Փաստեցին, որ մեծ պատիվ է հայտնի աստղագետի անվամբ դպրոցն անվանակոչելը:

Որոշեցին՝ Հավանություն տալ «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ականավոր աստղագետ, ակադեմիկոս Գրիգոր Արամի Գուրզադյանի անվամբ անվանակոչելու առաջարկին:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ / Ա. Դանիելյան

Քարտուղար՝ / Ս. Դարբինյան

Քաղվածք

Երևանի հ. 163 հիմնական դպրոցի ծնողական խորհրդի նիստից (22.02.2023թ. արձանագրություն N3):

Օրակարգ՝ «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անվանակոչության հարցը (զեկուցող՝ տնօրեն Ա. Դանիելյան):

Լսեցին՝ Երևանի հ. 163 հիմնական դպրոցը ականավոր գիտնական, ակադեմիկոս Գրիգոր Արամի Գուրզադյանի անվամբ անվանակոչելու մասին:

Դպրոցի տնօրեն Ա. Դանիելյանը ներկայացրեց ՀՀ պետական մրցանակների դափնեկիրներ, տիեզերական ծրագրերի առաջատար ճարտարագետներ Զախարյան Աշոտի և Կաշին Ալեքսանդրի հ. 163 հիմնական դպրոցը ակադեմիկոս Գ. Ա. Գուրզադյանի անվամբ անվանակոչելու առաջարկը և նրա մասին տեղեկագիրը:

Արտահայտվեցին՝ ծնողական խորհրդի նախագահներ Ա. Հարությունյանն ու Լ. Աղավելյանը: Փաստեցին, որ դպրոցի անվանակոչումը մեծն աստղագետի անվամբ հպարտության աղբյուր է թե՛ համայնքի, թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների համար:

Որոշեցին՝ Հավանություն տալ «Երևանի հ. 163 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ականավոր աստղագետ, ակադեմիկոս Գրիգոր Արամի Գուրզադյանի անվամբ անվանակոչելու առաջարկին:

Ծնողական խորհրդի նախագահ /Ա. Հարությունյան

Քարտուղար /Լ. Ավագյան